ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Բեսթ Մայնինգ» ՍՊ ընկերությունը Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 17.01.2025թ.-ի ՈՇԱԹ-29/762 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ արտադրական հրապարակի տարածքում,
4. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Բեսթ Մայնինգ» ՍՊԸ

տնօրեն՝ Ա. Գևորգյան

«ԲԵՍԹ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
«BEST MINING» LLC
«БЕСТ МАЙНИНГ» ООО
00501976

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտքագրման No 01-2001
«17» 02 2026 թ.

ք. Երևան, Հոսթյան 59/2, 21բ.
levonavetisyan1987@gmail.com
096 66 66 56